

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:
Մեք. հասցէն. Тифлисе, Редакция «Маска».
Կամ Tiflis, Rédaction «Maschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիցուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խմբագրութիւնը տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

Սրկարատե և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց՝

ՆԱՏԱԼԻԱ ԵՍԱՅԵԱՆ ՄԱՂԱԹԵԱՆՑ

որի մասին խորին ցաւով յայտնում են նորա ամուսին Միքայէլ Մաղաթեան և զաւակները՝ Մարգարիտ և Կարինէն, Աննա Լուկանց, Մարիամ Շիսեանց, Հեղինէ և Տիգրան Մաղաթեանները: Հոգեհանգիստը ապրիլի 2-ին, երեկոյեան ժամը 7-ին, Յուդարկաւորու թիւը հինգշաբթի, ապրիլի 3-ին, առաւօտեան 10 ժամին, տեղական տանից, (Օլիմպիական, № 14) դէպի Մոզմուս. Գերբէկեան Եկեղեցի: Թաղումը կ'ընդհանրեն գերեզմանատանը:

2-2

ԲՈՒՄԱՆԻՍՏԻԿԱՆ

Քաղաքական առեւթիւն. — Երբեք Տե-
սիսիսի. Մի աշակերտական ճանապարհոր-
դութիւն. Աշակերտական իրաւասկին երեկոյթ.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍԻՍԻՍԻՆ. Նա-
մակ Պարսկաստանից. Արաւելի լուրեր. — Հի-
նդիսիսի. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԱՆ-
ՆԱՍԻՐԱՅԱՆ. Դու մեզի:

ԲԱՆԱԳՐԱՆ ՏԵՍԻՍԻՍԻՆ

Եւրոպական պետութիւններից իւրա-
քանչիւրը աշխատում է ցոյց տալ, որ նա
բարեկամ է միւս պետութիւններին և պատ-
րաստ է փոխադարձ գիշուհներով ամրա-
պնդել բարեկամական զբաղմունքը:
Իերմանիան, որ զաշխարհագրութեամբ կապ-
ված է Աւստրիայի և Իտալիայի հետ,
առիթմեր է բաց թողնում համակրական
զբաղմունքներ յայտնել և միւս պետու-
թիւններին: Իերմանիան մօտ է Անգլիային,
որի հետ նոյն իսկ մասնաւոր զաշխարհագր-
ութիւն ունի: Աֆրիկայի մի քանի հողերի,
Ուղիական մի քանի կղզիների, և Միջա-
գետքի վերաբերութեամբ: Իերմանիայի
թաղաժառանգը մի քանի ժամանակ առաջ
այցելեց Ռուսաստանը, որտեղ ընդուն-
վեց սիրալիր կերպով: Իերմանիական կայսրը
նորեք այցելեց Իանիայի թաղաւորին և
վերադարձաւ զոհ սրտով: Իերմանիական
թաղաժառանգը այցելեց Թիւրքիայի և
Յունաստանի մայրաքաղաքները և այդպիսի-

սով ցոյց տուեց իր բարեկամական վերա-
բերմունքը դէպի այդ պետութիւնները:
Իտալիան առանձին ցոյցերով ցանկա-
նում է համոզել ֆրանսիացիներին և անգ-
լիացիներին, որ նա իրան մօտ է զգում
բամանական ցեղի այդ երկու խոշոր ձիւ-
ղերին: Մի և նոյն ժամանակ Իտալիան
յայտնում է, որ նա թող չի տայ, որ Բուլ-
կանեան թերակղզում փոխվեն քաղաքական
իրաւասութեան պայմանները և կազմվեն
նոր քաղաքական մարմիններ:

Անգլիան, որ առհասարակ էր սիրում
զաշխարհագրութիւնների կապել միւս պետու-
թիւնների հետ, ներկայումս զաշխարհագր-
ութիւններ ունի Իերմանիայի, Յապոնիայի
Պորտուգալիայի հետ և առանձին պայմա-
նախօսութիւններ միւս պետութիւնների
հետ՝ զանազան հարցերի վերաբերու-
թեամբ:

Թէև պատերազմելու ցանկութիւն չը
կայ, թէև մօտայալու ընդհարման և վա-
ռօքի հոտի նշաններ չը կան, բայց պե-
տութիւնները զգում են, որ օրեցօր աւե-
րանում է այն կիճուտ հարցերի թիւը,
որոնք կարող են առաջ բերել ընդհարու-
նեք և եթէ մինչև այսօր չեն բռնկվել,
միայն այն պատճառով, որ պետութիւն-
ները ամեն ջանք գործ են դնում պատե-
րացմի առաւել առնելու:

Մակայն կեանքը առաջ է գնում և զրաժ-
հարցերը գործնական լուծում են պահան-
ջում: Որքան էլ նրանք յետաձգվեն դիպ-

խաններ ունի: Լաւ իմացիր, որ էս Չատկին
Դուկասին եմ թաղելու, իսկ եկող Չատկին
քեզ է, քեզ, և զլուխը մեռնի, բայց պրծնեմ
քեզանից. ամեն բանում ինձ հակառակ ես
գնում, ինձ հակառակ ես խօսում:

—Ա՛, երէց, անց եմ քեզ հակառակ գնում, մի
ասա, տեսնեմ:

—Բա էդ հակառակութիւն չի, որ գնում ես
Դուկասին առում, թէ լաւ կը դառնաս, գնում
ես նրան զուր յոյսեր տալիս: Մեծ պատի
առաջի շարժից սկսած ես նրան ամեն օր այցե-
լում եմ, հանդերձաւ կեանքի մասին հետը
խօսում, մեր էս մեղաւոր աշխարհը նշովում
ու այդպիսով հասկացնում նրան, որ նրա
բանն այստեղ վերջացած ա, որ պատրաստվի,
մաքրվի հոգով, հրեմեմք դէպի երանելին գնա-
լու:

—Ա՛, երէց, բա որ ապրի:

—Ապրիլ չի. կարգովս երգվում եմ, որ ապ-
րիլ չի. ինչու՞ն տարեկան մարդը ամբողջ մեծ
պատին մախոյն ու լօբի ուտելով ծանր հիւան-
դութեան ճանկերից չի ազատվիլ: Էն ա տաղ
արա, էլ գնաս ոչ ուր յոյսեր տալու, որ ինձա-
նից պրծնիլ չես. գնացած տեղը հանդերձաւ
կեանքից խօսա միայն. անցաւորը քանի կա-
րում ես նշովիլ: Էս Չատկին ես իմ ձեռքից
Դուկաս չեմ բաց թողնիլ, թաղիլ պտեմ ան-
պատճառ: Տղէք խոստացել են Դիմաց տեղի
գինու դաքարը բանիլ ու իրանց տաւարի աչքի
լիւ ծաղիկը եզը մորթիլ անպատճառ, գեղն
ամբողջ հիւրասիրել ու այդպիսով անմահացնել
իրանց ապօր յիշատակը:

—Ինչ ա, կարծում ես, թէ ես Դուկասի
փէշից պնդել բռնել եմ ու ասում նրան՝ մեռնի:
Ա՛, ապրի: Ո՛ր ա, ես քեզանից շատ ուրախ
մեռաւ:

լուսանների հմուտ և ճարպիկ գործունէու-
թեան շնորհիւ, այնուամենայնիւ մի օր
նրանք այնքան ուժգին յոխորտումով առողջ
կը դան, որ կը ստիպեն պետութիւննե-
րին դուրս գալ հանգիստ վիճակից: Ահա
այդ սպառնալիքը և այդ ուրուականը
ստիպում են պետութիւններին մի կողմից
զինել, իսկ միւս կողմից զաշխարհայեցի
թիւը աւելացնել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՍԻՆ

ՄԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԶԱՆԱՊԱՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Մարտի 31-ին երեկոյեան Թիֆլիս վերա-
դարձան Ներսիսեան դպրոցի վեցերորդ դա-
ւարանի աշակերտները, որոնք մարտի 28-ին
իրանց դատարարական և Լիսիցեանի ղեկավա-
րութեամբ դպրոցական զբօսանքի էին գնացել
Լանկահին և նրա շրջակայքը: Այսպիսով այդ
պտոյտը տեղեց երեք օր: Թէև մեկնելու օրը
եղանակը փոխված էր, մանր անձրև էր մա-
ղում, այնուամենայնիւ բոլոր էքսկուրսանտ-
ները զուարթ ուրախ ճանապարհ ընկան: Նը-
րանց բախտից Կոմիտի լճից դէնը օրը սկսեց
պարզվել, մառախուղը թալվեց լեռները, աշա-
կերտների առաջ բացվեցին դաշտերն ու աշ-
տանները: Նրանք կարող էին վազօնի պատու-
հանքերից հեռու դիտել շրջակայքը:

Ճանապարհին հաղորդում էին նրանց զանա-
զան տեղագրական և պատմական տեղեկու-
թիւններ և քանի որ աշակերտների մէջ կային
նաեւ երկու-երեքը, որոնք Բօրչալուի դաշտի,
Ալգետ և Սրաւ գետերի գիւղերիցն էին, նը-
րանք ևս պատմում էին ընկերներին իրանց
ծննդավայրի, շրջակայ հտուժիւնների, գիւղա-
կան կեանքի մասին: Նրեւ երկաթուղին մտաւ
Դիւբաթի (Չորագետի) ձորը, աշակերտները
հրճված նայում էին փոփոքացող գետին և լան-
ջերի անտառներին, որտեղ հոնի և այլուչի ծա-
ղիկները դեղին ու սպիտակ շղարշով էին
ծածկել տերւները:

Ժամի 5½-ին ճանապարհորդները հասան
Արաւիկի: Այլապէս և իրերը բարձելով
Սանահին վանքից ուղարկված ձիու վրա, ի-
րանք օտով բարձրացան վերև մի ծերունի

կը լինեմ, և երէց, եթէ քո յոյսերը կատարվեն
ու Չատկին իրար հետ մի լաւ զէֆ անենք,—
ասաց Նղի ամին:

—Բէֆ կանենք, էն էլ ոնց զէֆ, և Նղ. մինչև
Չորագետից դաքարը չը դարձանք, Դուկասը
աջակողմեան դաքար չի հասնիլ: Առ մի բանով
քաշի ու սիրտը ուրախ պահի՛ ա,—ասաց տէր-
Գէորգը Նղի ամին, մեկնելով նրան իր բռնո-
թեամբ:

Տէր-Գէորգի յոյսերը նշանակած ժամա-
նակին չիրագործվեցին, այլ հակառակի պէս
շատ շուտ. Չորագետից Դուկաս ապէրը, ան-
կարող լինելով այլ ևս մարտել լօբին ու մա-
խոյնը, մեռաւ առաջ երեքշաբթի օրը: Չատկից
հինգ օր առաջ Մահն անապատելի էր, համա-
րեա յանկարծակի. Դուկաս ապէրը կարողացաւ
միջան ասել իր չըստպատկերին՝ Բինձ մեր
Դաւալի աղջկայ կողքումը թաղեցէք, ու ա-
ւանդեց հողին: Դաւալի աղջկը Դուկաս ապօր
կինն էր, որը մեռել էր հինգ տարի նրանից
առաջ:

Նրա հանգուցեալի մեծ օրդի Դաղարը գնաց
տէր-Գէորգին յայտնեց իր հօր մահան լուրը,
նա այնքան բարկացաւ, որ քիչ մնաց թէ մօտը
գտնվող ջրի գոլան Դաղարի գլխովը տայ ու
փչիլ յայդպիսով խեղճ մարդու կարկածը:

—Ա՛, տէր, ապէրը մեռաւ,—ասաց Դաղարը:
—Ինչ, ինչ, ինչ:

—Մեռաւ էլի, մի սնաթ առաջ մեռաւ:

—Այ նա զլուրեւ ջարդով եկաւ,—ասաց սաս-
տիկ յուզված ու բարկացած տէր-Գէորգը,—
շանը դուրս կը գան, որ մի-երկու օր էլ սպա-
սէր. կարում է՞իք պահել ու մի հանգով հասց-
նէիք Չատկին. էս նեղ սնաթին անք նա ինչու
մեռաւ:

հանաքի սանահնեցու առաջնորդութեամբ, Նը-
րանց առաջ բացվեց Սանահին սարահարթը իր
վիհանիստ նրբակերտ վանքով, հեռում, ձախ
կողմում, ձորի միւս ափին Որնակը, իսկ ա-
ւելի հեռու, խորհրդաւոր Հաղաւոր Արտերը
ծլել—կանաչիլ էին: Երգելով աշակերտները դի-
մեցին դէպի վանքը, ամբողջ գիւղը կտուրները
զուրա թափած լսում էր նրանց ոգևորված
երգը: Գարեգին և Կարակոպոս Սաթուհեանը
գիւղաւորեց երիտասարդներին վանքի բակում
և ողջունեց նրանց դալուստը: Աշակերտները
իսկոյն մտան իրանց համար նախօրօք պատ-
րաստած սենեակները: Շուրջը երեւում էր
գործունէութիւն. հին խուցերը վերաշինված
էին, կառուցվում—վերանում էր նոր հիւրա-
տունը, եկեղեցու ամբողջ տանիքը նորոգված
էր, պատերը մաքրված:

Թէյ խմելով և ընթերց անելով, աշակերտ-
ները պառկեցին, 12 հոգի մէկ, 12-ն էլ միւս
սենեակում, երկուսն էլ հրաւիրվեցին գիւղ
Ներսիսեան դպրոցի մի աշակերտի ծնողի
տուն: Մինչև կէս գիշերից անց երիտասարդ-
ները չէին կարողանում քնել—էրգ, հանաք,
առակ, հէքիաթ, սրախօտութիւններ անվերջ:
Միւս առաւօտեան ժամից յետոյ նրանք դի-
մեցին Հաղաւոր Մաղիկներ հաւաքելով, հարց-
նելով միմեանցից նրանց զանազան զուտա-
կան անունները, աշխատելով ճանաչել ծանրի
տեսակները իրանց բներից և ձիւղերից, շա-
րունակ երգելով, նրանք անցան երեք ձորերով
և բարձրացան Հաղաւոր վանքը: Ճանապար-
հին նրանք մտան Որնակ գիւղը և երկար ժա-
մանակ նայում էին, թէ ինչպէս հայ կիրք գոր-
ծում էր մի տեղ չալ, միւս տեղ փայտաւ: Չո-
րերի ուղղափառաց ժայռերի մէջ նրանք տե-
սան այն պատմական այրերը, որտեղ թագ
էր կենում տեղական ժողովուրդը բարբարոս
ազգերի արշաւանքների ժամանակ, տեսան
Կայան բերդը, յիշեցին այդ վայրերի հետ
կապված պատմական դէպքերը:

Հաղաւոր իր հոյակապ յիսութիւններով ա-
ւելի վսեմ տպաւորութիւն թողեց, քան թէ
Սանահինը: Մտնելով Հաղաւոր, նրանք սկսեցին
երգել եկեղեցական երգեր և զարմանում էին
ոնցմանսի վրա. ամբողջ տաճարը լցվել էր
ձայներով և զրոյից լողի վրա այն տպաւորու-

—Դէ գիտում չեմ, և տէր, մեռաւ էլի. եկ
գնանք հողոց ասա ու ինչ հարկաւոր ա, կար-
գադիր, որ հինգշաբթի օրը թաղենք:

—Գնա, կորի, առաջ ըլի գլխից. ես էս պա-
տում Դուկաս չեմ թաղիլ. աչքս ջուր ա կտրել,
էնքան սպասել եմ. պահեցէք, կիրակի օրը կը
թաղենք:

—Ա՛, տէր, անք պահիլ չի օրերը տաք են,
չոք են. մինչև կիրակի հինգ-վեց օր կայ, պէտք
ա հինգշաբթի օրը անպատճառ թաղես:

—Ուր ըլի, քեզ ասում եմ. Դուկասը չի, որ
Դուկասի պապն էլ ըլի, էլի ես էս պատումը
նրան չեմ թաղիլ. գնա մինչև կիրակի պահի:

Դուկաս ապօր միւս օրդիները, նրա ազգա-
կաններից շատերը եկան տէր-Գէորգի մօտ,
խնդրեցին, աղաչեցին, բայց դարձեալ ոչ մի
աջողութիւն չունեցան: Բոլորին էլ պատաս-
խանում էր նա՝ «պահեցէք, Չատկի օրը լաւ
կը թաղեմ. Դուկասին ես շատ անգամ եմ փա-
ռաւոր թաղում խոստացելու»:

Պահանջվեց տանուտէրի ու իշխանների մի-
ջանութիւնը, նրանք մի կերպ համաձայնեց-
ին տէր-Գէորգին: Առաջ հինգշաբթի օրը, պա-
տարագից յետոյ, ժողովրդի ստուար բազմու-
թեան ուղեկցութեամբ, մտնում Դուկաս ապօր
գլուխն ու արեւ հողիւղով, տարաւ նա նրան
թաղեց Դաւալի աղջկայ կողքում:

Թաղումից յետոյ ժողովուրդը վերադարձաւ
Չորագետից տունը: Դուկաս ապօր հողահանց
ուտելու հոգեհանգր շատ պարզ էր ու անուղ-
պատեց էր, բացի լօբից, մախոյնից ու չիւրա-
փաւեց ուրիշ ոչինչ չը կար: Թէև անատ էր
գինին, բայց գինի խմեցող կերակուրներ
բողբալ ու խորովածախառն չը կային: Մաղիկ
եղը, որն ըստ տէր-Գէորգի ծրագրի պէտք է

Թիւնն էր թողնում, կարծես զողորմալիս—խօսելիս լինէր վերադառնալով Սանահին երեկոյան ժամերգութեանը, աշակերտները թէյից յետոյ բարձրացան մերձակայ սարի լանջը և այնտեղից երկար դիտում էին չրջակայքը, և դիմացի անթողիւր Պարզ լուսնկայ գիշեր էր, մի քանիսն բարձրացել էին աւելի վերև և Ֆլէյտ անուամբ, մի ուրիշ խումբ ներքեից պատանախանութիւն էր նրանց երգերով։

Ամբողջ կիրակի օրը աշակերտները անցկացրին Սանահինում։ Նրանք մանրամասն դիտեցին բոլոր հնութիւնները, պատմական աղբիւրը, մասն գիւղական տներէց մի քանիսը, առանհին դարպասը (Վրաստանցի և քաղաքացի աշակերտները առաջին անգամն էին մի հայ գիւղում), ցորենի հորերը, տեղական զգեստները։

Այժմ թէ տները և թէ զգեստները փոխվելու վրա են։ Գիւղում արդէն մի քանի բարձր տներ են շինուում կրամիտածով, կանանց զգեստները մոտենում են նոր ձևերին, նոյն իսկ երևացել են գլխարկներ... Այս բոլոր զբոսանքները սակայն չէին խանգարում աշակերտներին իրանց կրօնական պարտականութիւնները կատարելու։ Պատարագին նրանք խմբովին քառանկյուն երգեցին (վաղուց է այդ պատերը չէին լսել այդպիսի երգեցողութիւն) և ճաշակվեցին։ Իրանց արտաբերած ցաւակցութիւնը ցոյց տալ ուղեւորով վաղամեակի ընկերով, նորերս վախճանված սանահինցի Նիկիէ Չաքաւրեանի (XV-րդ դարաւանցի) ծնողներին, նրանք պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարեցին, և զգացված զուրա եկան եկեղեցուց։ Աշակերտական սեղանին այդ օրը ներկայ էր Գարեգին եպիսկոպոսը և ճաշից յետոյ հիւրասիրեց մեզ։

Երկուշաբթի առաւօտեան մնաս բարով աւելով նուրբական վայրերին և արտագին չնորհակալութիւն յայտնելով իրանց հիւրասիրող վանահօրը, որը ամեն ջանք գործ էր դրել երկրասարգներին ամեն յարմարութիւն ապաւել, աշակերտները իջան ձորը՝ Ալավերդու հանքերը տեսնելու։

Հանքատեղ ընկերութեան կառավարիչը սիրալի կերպով թող տուեց գործի ամեն մասնաբաժնեւորներին ծանօթանալու և մի բան նիւայց ուղեցողի յանձնեց աշակերտներին առաջնորդելու։ Աշակերտները մտան նախ հանքատեղերը և սկսեցին այն կէտից՝ ինչպէս է հանքը ընդգծւում և հանվում, աստիճանաբար ծանօթացան դոման և հալման բոլոր շրջաններին հետ, իջան այն սարից, որտեղ հանքն է գտնվում, և անգամ Մանդկ կոչված հալարանը, երկաթուղու հէնց գծի մօտ։ Ժամի երկուսին նրանք նստեցին վազան և վերադարձան Թիֆլիս, ուր նրանց համար յատուկ վագոն էին ձրի ուղարկել Աւստրիական ձիաբաշի տէրերը, ինչպէս և մեկնելու ժամանակ։

Այսպիսով աշակերտները վերադարձան քաղաք բազմազան տեղեկութիւններով հարստա-

ցած և ահադին զուարճութիւն ստացած և կարող են նորոգված ու թարմացած ոյժերով հնարարկել աւարտական քննութիւններին, որոնք սկսվում են չորեքշաբթի, ապրիլի 10-ին։

ԱՆՍՄԵՆԻ ԹԻՇԱՏԱԿԻՆ ԵՐԵՎԱՆԻ
(Նամակ Բագուից)

Շաբաթ, մարտի 22-ին, Թաղիկի թաղոսնում օպերային խումբը մի երեկոյթ տուեց մեր տաղանդաւոր ողբերգու Պետրոս Աղամեանի յիշատակին։

Երեկոյթը կազմված էր շատ ճոխ և հետաքրքիր ծրագրով, որը և թատրոն էր գրաւել բազմաթիւ հայ և օտարազգի հասարակութիւն, որը շատ գոհ մնաց կազմակերպողներից։

Երեկոյթը բաղկացած էր չորս բաժանմունքից, մասնակցում էին օպերային բոլոր յայտնի դերասանները, խումբը, օրկեստրը և մեր տաղանդաւոր դերասանուհիները։ Հրաշխան ու Սիրանոյշը։

Առաջին բաժանմունքում օպերային երգիչ պ. Կոստանեանը օրկեստրի դաշնակցութեամբ երգեց տեղիս հասարակական ժողովարանի օրկեստրի կառավարիչ պ. Սերբուլովի մի կանտատան Աղամեանի յիշատակին գրված։ Վերջից կանտատան մի չքնաղ օրհներգ է և պարունակում է իր մէջ արեւելեան երաժշտութեան հրաշալի կտորներ։ Պ. Կոստանեանի ձայնի և երգելու մասին գրել աւելորդ եմ համարում։ Ապրիլի, ուրախութեամբ պէտք է ասել, միշտ առաջ և առաջ է դնում և այս սեպտեմբեր օպերային խմբի մէջ իր պատուաւոր տեղը ունէր։

Երկրորդ բաժանմունքում օպերային խումբը ներկայարարեց Վերդիի «Օթելլո» օպերայի վերջին գործողութիւնը, որի մէջ Դեզդեմոնայի դերը փայլուն կերպով կատարեց Գալինա Կան, իսկ Օթելլոյին՝ Բոսանիչ։

Երրորդ բաժանմունքում ներկայացրին «Համբլետ» օպերայի առաջին և վերջին տեսարանները։ Մասնակցում էին Բօբրովա, Գլադկով և խումբը։ Հասարակութեանը մանաւանդ շատ զուր եկաւ վերջին տեսարանը։ Օթելլոյի դերը կատարում էր Բօբրովա, որը ի դէպ առեւժ այս օպերային սեզոնի ընթացքում իր ամենամ խաղով և չքնաղ ձայնով դերակազմակերպել է բազմաթիւ միջոցաւթութեան սրտերը։

Ամենամեծ հետաքրքրութիւնը ներկայացնում էր չորրորդ բաժանմունքը, որի մէջ պ. Իւսիկ երգեց մի բաժան և «Նիս»-երին՝ հերոսի արիւնք «Բիթլիտա» օպերայից և հայերէն «Միթեմա»-ը, որը չը նայելով խօսքերի աղաւաղմանը, շատ զուր եկաւ հասարակութեան և կրկնվեց։ Պ. Կոստանեան երգեց «Կոնսկը», որը կրկնվեց և «Նիս»-երին մի առաւել և մի իտալերէն բաժան։ Անկարգաբերի օպերաներով ընդունւոյ հասարակու-

ղիւսման։

—Ինչ, ինչ, ինչ—հարցրեց զարմացմամբ Նիկ ամին, —առում ես մեռնեմ։

—Հա, մեռն. ամա ուտում մեռն է, ուտում և լաւ բոլ գեղ, ժողովուրդ ես կառավարել, թող հիմի էլ ուրիշները քո արածն անեն, օրէս ետը երեւիները գեղի համար ցաւեն, ամա եթէ պատում մեռնես, թաղիլ չեմ քեզ հա, լաւ իմացիր. Աստուծո կրակը վրէժ վեր կածեն,—ասաց տէր-Գեորգը։

—Այ խախը,—չարձաւ Նիկ ամին ժողովուրդին,—տեսնում էք մեր երէցն ինչ առում ա՛ մեռն, էն էլ ուտում մեռն, որ թաղումս հարսանիք դարձնի։ Ձեզ եմ հարցնում՝ լաւ ա ասում։

—Հա, Նիկ ամի,—ձայն տուին այս ու այն կողմից,—տէրը լաւ ա ասում, մեռն, ուտում մեռն, որ մի լաւ քէֆ անենք. լաւ բոլ գեղը կառավարել ես, թող մի քիչ դիւլանայ, աղատվի քո ձեռքից, մեռն։

—Աստուած ողորմի Գեորգը Մակին ու Գիւլունը Պողոսին, և Նիկ,—ասաց տէր-Գեորգը,—հարաւ էլ գեղի իշխաններ էին, քո ընկերներն էին. Նրանցից օրինակ վեր կալ. երկուսն էլ մեռան ուտում, բարեկենդանին փառաւոր թաղեցինք, կերպք, խմբինք, քէֆ արինք ամբողջ երկու շաբաթ, լաւ քէֆ ու երկուսին էլ երկնային արքայութիւնը, ուղղակի աշխուղեան դաժան ուղարկեցինք այդ պիտով. դու էլ մի ուտիս, մի աղիւր օր մեռն, որ նրանց մօտ գնաս է, ա զլխամեռ։

—Փառաւոր լինես, ա տէր,—ձայն տուին ունկնդիրները,—լաւ ես ասում. Նիկ ամին պէտք ա անպատճառ ուտում մեռնի։

—Նիկ ամին, տեսնելով, որ բոլորն էլ նրան

թիւնը տ. Հրաշխի և Սիրանոյշի երեւոյթ, որոնք մի մի ոտանաւոր կարգացին և հասարակութեան ցանկութեամբ կրկնեցին։

Վերջում ցոյց դրվեց մի չքնաղ կենդանի պատկեր. Աղամեանը, անփոյթ կերպով նշուած է մի ժայռի վրա, ծնկան վրա ունենալով մի գիրք։ Նրա չորս կողմում նստած և կանգնած են Համբլետը, Օթելլոյն, Լիր արքան և նրա խաղացած միւս հերոսները, իսկ գլխավերեւ կանգնած է թատրոնի էմբլեման՝ մի սպիտակազգեստ կոյս, դափնեայ պսակը Աղամեանի գլխին բռնած։ Հասարակութեան ցանկութեամբ պատկերը կրկնվեց երեք անգամ։

Եւ այսպէս փայլուն կերպով վերջացաւ հեռու հիւսիսից եկած օտարների ձեռքով կազմակերպված երեկոյթը՝ հայ տաղանդի յիշատակին, մեծ բաւականութեւն պատճառելով բազմաթիւ հայ և օտարազգի հասարակութեանը իսկ մէջք, մէջք ինչ արեցինք...

Ոչինչ և ոչինչ...

Վ. Թումանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

«Մշակի» հետեւեալ համարը տօնի պատճառով լոյս կը տեսնէ չաբաթ, ապրիլի 5-ին։

Ապրիլի 1-ին կայացաւ Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովի չորսերեսութիւնը, որի ժամանակ տեղի սենեկան ընկերութեան պաշտօնաւար անձերի ընտրութիւնները։ Վարչութեան անդամներ կրկին ընտրվեցին իշխանուհի Մարիամ Թումանեան, Յովսէփ Ամիրխանեան և Փիլիպպոս Վարդանեան. փոխաւարչներ՝ Տիգրան Յովսէփանեան և Կարապետ Շմբերեան. վերատուգող յանձնաժողովի անդամներ—Ալեքսանդր Շահինեան, Ստեփան Մնացականեան և Կայեանեան։

Երկրագործութեան և գիւղական արգիւնաբերութեան ղեկարարամէնտում այս ապրիլ ամսի միջին թերթում կը սկսէ իր նիւսերը մի մասնաժողով, որ պէտք է քննէ Արդարութեան գիւղացիների հողային դրութեան կարգաւորման վերաբերեալ հարցերը։ Այս մասին օրէնքի հրատարակումից յետոյ՝ մինիստրութիւնը պէտք է ձեռնամուխ լինէր կարգաւորելու պետական գիւղացիների դրութիւնը, սակայն երևաց, որ անհրաժեշտ է նախօրօք կազմել մի ճշգրիտ հրահանգ, որի հիման վրա էլ կատարվեն այդ կարգաւորումը։ Արդէն անցեալ տարվանից սկսված են նախնական աշխատանքները Երևանի և Թիֆլիսի նահանգներում, որոնք սակայն առաջ չը գնացին ճիշտ հրահանգի բացակայութեան պատճառով։

«Рыс. Вѣд.» լրագրում կարդում ենք հետեւեալ պաշտօնական հարցադրութիւնը. «Մար-

ման են ցանկանում, բոլորն էլ՝ տանուտէր, իշխան, պաշտօնիկ՝ մի ձէնի ասում են նրան՝ մեռն եւ մեռն, սաստիկ վշտացաւ, կախեց գլուխը ու սկսեց ագահութեամբ բռնաթի քաշել։ Նա, որ յիստէն տարուց աւել գեղ, ժողովուրդ էր պահել ու կառավարել, այդպէս էր վարձատրւում ապերախ ժողովուրդից, այդպիսի հարուածը տանել հեշտ չէր նրա համար։ Իշխաններից միայն միքը, Ուսուփ-բէգը, նրան մեռնել չէր առաջարկում. լոււ էր նա բոլոր ժամանակ. նրա լուռութիւնը խրախուսեց Նիկ ամին Կարծելով, թէ Ուսուփ-բէգը իր աղբիւրը կողմնակից է, դիմեց նա ժողովուրդին ու ասաց։

—Ա՛յ ժողովուրդ, բոլորդ էլ՝ տէրտէր, տանուտէր, իշխան ու պաշտօնիկ՝ մի ձէնի ասում էք ինձ՝ մեռն եւ մեռն. մեր մեծ իշխան, մեր մեծ պաշտօնիկ Ուսուփ-բէգը ոչինչ չի ասում. ես միայն նրա ասածը կը կատարեմ. թողէք հիմի էլ նա խօսայ Ուսուփ-բէգը վերցրեց գիւնու թաւը ու դիմեց Նիկ ամին. բոլորն էլ լարեցին իրանց ուշադրութիւնը. տիեզ խորին լուռութիւն։

—Ա՛յ, գիտում ես ինչ կայ,—ասաց Ուսուփ-բէգը,—դու գեղի հին իշխան ես, ժողովուրդի կապ ընդող ես. իրաւունքով տարի ա, ինչ ամբողջ գեղը ձեռքդ հաւաքած ուղղածիդ չափ հուփ ես տալիս, սեղումում ես. կեանքդ մի կրկնել ես, բոլ խմել գեղաբնիկից, գեղի հաշուով. գեղը քո գերին, քո ձորան, քո ետին ա ըլել համարեա. էս գեղումը տուն չը կայ, որտեղ դու անթիւ անգամ կերած ու խմած չը լինես. ինքը երբեմն, ինչեւի՞ր քո անցեալը, ասում ես՝ «կրակ ընկնի իմ ընկեր»։ Ո՛վ գեղաբնիկում գործ, գանգատ ու ունեցել,

տի 27-ին, գիշերվալ ժամի 12-ին, երբ ուտուկանական պաշտօնեաները նայում էին Մակուկին գիշերային ապաստարանը, որ գտնվում է Պետերբուրգում, Իշխանուհի գնդի 6-րդ բաժնի № 24-րդ տանը, ապաստարանում գիշերողները յաճառ դիմադրութիւն ցոյց տուին։ Հէնց որ սկսվեց անցագրերի ստուգութիւնը, գիշերողները իսկոյն հանգրքին լամպաները, աղաղակ բարձրացրին, սկսեցին կոտորել պատեանների ապակիները, ջարդել նստարանները և սպառնալ ոստիկանութեան։ Երբ ապաստարանում ոստիկանների թիւն աւելացրին՝ գիշերողները թափեցին նաւթը նստարանների վրա և այրեցին նրանց։ Սակայն վրա հասան հրդեհաշէջները և չուտով հանգրքին հրդեհը։ Ոստիկանութեան դիմադրողներից ձերբակալվեցին 380 հոգի և ուղարկվեցին բանտ։

Երկուշաբթի, մարտի 31-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի քաղաքային դումայի նիստը, որի ժամանակ կատարվեցին քաղաքային ուսումնարանական մասնաժողովի նոր անդամների ընտրութիւնը։ Գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին հետեւեալ անձինք. Ա. Բաբով, Իշխ. Ա. Երկանաբաղով-Արդուլեան, Պ. Գոլուխանով, Ռ. Յովսէփանեան, Ա. Անդրէեւ, Մ. Գաւանով, Ս. Վաչագէ, Իշխան Վ. Միքելաճէ, Ս. Լիսիցեան, Ի. Մէլք-Քէզարեան և իշխան Գ. Թումանեան։

ԲԱՇԳԻՆԻՆԻՑ մեզ գրում են. «Մարտի 22-ին, չաբաթ օրը, մեր ժողովրդական ուսումնարանում Գրիգոր Լուսաւորյի տօնի առթիւ տեղի ունեցաւ չորրորդ գրականական հանգէս՝ Հանգէսը բաղկացւեց «Вожѣ, Паря, храмъ» Կայսերական մաղթանքով, որ երգեց աշակերտական խումբը։ Բաղկացան և ապա հայերէն «Տէր կեցո» մաղթանքը։ Աշակերտները պատմեցին և կարգացրին Գրիգոր Լուսաւորյի պատմութիւնը և բանաստեղծութիւններ, թէ հայերէն և թէ ռուսերէն վերջը խօսեց կրօնուսույց Գարիկէլ քահանայ Տուրքայեանը Գրիգոր Լուսաւորյի և ընդհանրապէս հանդէսների կրթիչ նշանակութեան և մայրենի լեզուի մասին»։

ԿԱՂԱՅԻՆԻՑ մեզ գրում են. «Մարտի 23-ին քաղաքից ոչ հեռու «Շահանգարա» (Բաղէի-ձոր) կոչվող ձորում անյայտ չարագործները սպանել էին տեղիս ընկեր թուրք երիտասարդներին, որոնք այնտեղի հանքից գալ հանելուց վերջը՝ նստել են Խրամում հանգրտանալու։ Պաշան չարագործները, օգտվելով այդ հանգամանքից, վեր են առնում մի մի մեծ քար և վերեւից գցում գծաղղ մարդկանց գլխին ու տեղի ու տեղը սպանում։ Գնաւութեան ժամանակ ցուցմունքներից երևաց, որ չարագործները քրդեր են եղած, որոնց եղբայրները օրանից մի քանի ամիս առաջ մի գողութեան մէջ ընկնեցին, որի համար լուսաւորյաներով վկայութիւն էր տուել դատա-

քեզ ուտացրել ա ու խմացրել, որ իր գործը առաջ գնայ. առանց Մայունց Նիկի մի թաւարաղի» գործ չի գրսովել. չուայ արաղը կուլ չես տուել դու, գործը մաղի չափ առաջ չի գնացել։ Ի՞նչ պատճառով դու պէտք ա անպիսի մի առաւ ժամանակ մեռնես, որ գեղի ամբողջ ժողովուրդը կտորոջնայ լինալ քո հոգեհացով, որ ամեն տանից էլ մարդ լինի քո տանը, ուտի, խմի ու սրտալի ողորմի տայ քեզ. դու անպիսի ժամանակ պէտք ա մեռնես, որ դա՛ քարդ, տակաւներդ, տներդ, ամբարներդ ու մասաներդ լիքը լինեն ամեն տեսակ բարեգեներով։ Դու գիտես երբ մեռնի։

—Մըր,—հարցրեց Նիկ ամին։

—Բաղաւաղից ետը, գինու ու հացի առատ ու մեռ էն քեզ, էն չաղ ժամանակը Գնա երբ քաղդ քաղես, խաղողը կոխես, տեղաւորես, գինին լաւ եփ գայ ու պարզի, կախիլը կախես ու ամբարներդ լցնես, տուարն էլ լաւ միս արած սարից վեր գայ, էն վախտը, և Նիկ, տաղ արած մեռն, սուս ու փուս վերացի էս աշխարհէն։

—Ուրեմն դու էլ ես ասում, որ մեռնեմ էլի, Ուսուփ-բէգ։

—Հա, մեռն. լաւ բոլ ապրել ես, ա զլխամեռ. դու էլ դիւլանցի, ու թող գեղն էլ քո՝ ձեռքից դիւլանայ, միայն իմ նշանակած ժամանակը մեռն, բաղաւաղից ետը, ուտում։

—Այ խախը,—չարձաւ Նիկ ամին ժողովուրդին,—դէ ես էլ ինչ տեսն ձեզ. կարծեցի, թէ մեր Ուսուփ-բէգը ինձ կապի ապրել, սխալվեցի։ Էդա նա էլ ա ասում՝ մեռն. Լաւ, որ էդքան ուղում էք, կը մեռնեմ. ես մեր գեղի, մեր հասարակութեան համար իմ կեանքումը շատ եմ չարչարվել, տանջվել, թակվել ու ջարդվել։

